

կեցնէ ի՛ր ալ կիսարձանը շինելու համար, «կատարեալ նմանութեամբ», ու այս ալ «երեք նիստի մէջ», յիսուն Փրանքի փոխարէն: Բայց, բազմաթիւ նիստերէ ետքն անգամ, այդ մարդը չի յաջողիր նմանութիւնը տալ: Ի՞նչ էր այս մարդուն անյայտելի շողովեան պատճառը, կը հարցնէ Զօհրապ:

«Աշխատասէր եւ խելացի էր, կը բացատրէ ինքը՝ Զօհրապ, չարունակելով իր նօթերը. ինչո՞ւ համար այն նմանութիւնը, զոր իր յաճախորդներուն կը խոստանար, չկրցաւ իրականացնել օր մը. վասնզի, շատ մարդոց պէս, թերութիւն մը ունէր. կը նայէր բայց չէր տեսներ: Նայելը չի բաւեր: Տեսնել գիտնալու է. ինչ որ քիչերու տրուած է»:

Արդ Զօհրապ՝ հետաքրքիր միտք, ամէն բանի կը նայէր եւ գիտէր տեսնել: Մեր Պալլաքն է, այս իմաստով: Կը տեսնէր բաներուն, դէպքերուն եւ նկարագիրներուն ամէնէն ցայտուն գիծերը, կողմերը, ու զանոնք վեր կը հանէր, կը դէժէր իր տաղանդաւոր վրձինովը:


Ահա՛ եւ գաղտնիքը իր «Ծանօթ Դէմքեր»ուն կենդանութեանը, յաջողութեանը, ապրումին: Երբ Զօհրապ այս դէմքերը կը դէժէ, ինչպէս եւ երբ նորալէպերուն մէջ նկարագրելը, մարդոց բնութիւնը մատնող խօսքեր, դէպքեր կ'արտայայտէ, անիկա իր *élément*-ին մէջը կը դնուի լիովին, ու պիտի կարենայ իր տաղանդին ուրախօրէն, սիրով, զոհունակութեամբ թողնել տալ:

Կենդանագիրները՝ որ կը կաղմեն իր «Ծանօթ Դէմքեր»ու հաւաքածոն, պիտի մնան դասական ստեղծումներ, աննախընթաց ու տակաւին չդերազանցուած, այս սեռին մէջ, ո՛չ մէկուն կողմէ:

ՍՏԵՓԱՆ ՇԱՀՊԱՋ

Աղեքսանդրիա

ԾԱՆՕԹ. ԽՄԲ. - Անցեալ տարի Բագմավիչ-ի մէջ հրատարակած էինք Պր. Ստեփան Շահապի մէկ գրութիւնը, Յակոբ Օշականի Գրիգոր Զօհրապի մասին («Բագմ.» 1954, թ. 11-12, էջ 288): Յօդուածը արտատպուած տեսանք Ազդարար-ի մէջ (1955, Յունուար 14 եւ 15). բայց դժբախտաբար որեւէ յիշատակութիւն չկար ազդարարի:



ՈՒՍՈՒՑՉԱՊԵՏ ALMO ZANOLLI-ի

(1876 - 1953)

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ճիշտ երկու տարի անցաւ այն օրէն, երբ դժբախտութիւնն ունեցանք կորսնցընելու Վենետիկի մեր սիրելի եւ բազմանշու Վենետիկի մեր Սեդիկ եւ բազմաճառ հայագէտը՝ Ուսուցչ. Almo Zanolli: Հայագիտութեան ժիր մշակը, որ 50 տարիէ ի վեր կ'արտադրէր իր բեղուն գրելով հայ բանասիրութեան ի նպաստ՝ լուծէ հայ յայտնական պարտականութիւն մըն է մեզի՝ յարգանքի տողերով օրհնել յիշատակը այդ պատուական մարդուն եւ պատասխանոր ուսուցիչին, որ իր կեանքի ընթացքին ապրեցաւ մեկուսացած փառքէ եւ պատիւներէ, կուցած միայն պատմաբանասիրական ու հայրախօսական հասոյրներու վրայ, յափշտակուած անոնց զերերկրային դիւթանքով:

Բագմավիչ 1907-էն ի վեր, զանազան առիթներով, ներկայացուցած է անոր մտքի փշտանքներէն. ու նաեւ ընդարձակ կենսագրական մը տուած է 1939ին, մեծ հայագէտին յաջողագոյն հրատարակութեան առիթով (Անդ, էջ 173-74):

Այս անգամ, մեզմէ աւելի՝ ի՛ր հրատարակութիւններն եւ ուսումնասիրութիւններն են որ պիտի խօսին մեր ընթերցողին: Արդարեւ եթէ ակնարկ մը տանք Ուսուցչ. Almo Zanolli-ի գործերու մատենագիտութեան, պիտի նկատենք որ 75ի կան ցուցակին, պիտի նկատենք որ 75ի վրայ 57 հատը դուռ հայագիտական են, որոնցմէ մաս մը արդիւնք են տարիներ տեւող վերլուծական աշխատանքի եւ խոր ու ծովածաւալ հետազոտութեան:

Արդար է, ուրեմն, որ անյիշատակ չանցնի այս խոնարհ ու համեստ, բայց բազմաճառ հայագէտին գործին հետ

նաեւ անունը, որ արդէն 1943էն ի վեր արձանագրուած էր Ս. Ղազարու Մխիթարեան ձեմարանի պատուով անդամներու շարքին մէջ: Անուն մը որ անմահացած է Փատուայի համալսարանի բեմէն, Վենետիկի M. Foscarini լիկիոնէն. անմահացած նաեւ իր վրայ հիացող աշակերտներու հոյէ մը:

Այդ հայագէտ աշակերտներէն մէկը, G. Frasson, կը գրէ. « Ուսուցիչը գոր ունէինք մեր աչքին դիմաց, որուն կ'ունէինք ինքնապէս զարմած, զոր կը սիկընդէինք ակնաջ դարձած, զոր կը սիկընդէինք եւ որուն հետ այնքան ընտանեալ ըլլինք եւ բարեկամաբար կը խօսէինք, ինչպէս հայ բազմաճառ բանասէրներէն, էր այն բազմաճառ բանասէրներէն մէկը՝ զոր իտալիան ունեցած է ներկայ դարու առաջին կիսուն »:

Եւ ճիշտ ա՛յդ է որ վաղացուցանեն իր բազմաթիւ գրութիւնները, ցրուած գիտական ու բանասիրական պարբերութիւններու մէջ. հմտութիւն հայագիտական հարցերու, բնականական աղբիւրներու, լեզուաբանական խնդիրներու, եւ մանաւանդ հայրախօսական վերլուծումներու: Գրականութիւն, պատմութիւն, աստուածաբանութիւն, բանասիրութիւն, լեզուագիտութիւն ներդաշնակօրէն ձուլուած մէջ: Եւ այնտեղ՝ տիպար գիտնականի անձին մէջ:

Իբրեւ յարգանքի համեստ փունջ մը՝ հայագիտութեան այս վարպետին անշուշտ հողակոյտին վրայ թող իշնան մեր այս ամփոփ խորհրդածութիւնները, քաջալեր եւ խրախոյս հանդիսանալով ապագայ սերունդներուն, որոնց կը ներկայացնենք հետեւեալ ցուցակը:

Հ. Ն. ՏԵՐ ՆԵՐՍԷՍԵԱՆ

ՅՕԴՈՒԱԾՆԵՐ ԵՒ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԾԱՆՕԹ. — Ուսուցչ. Almo Zanolli-ի գործերու ամբողջական ցուցակը հրատարակած է G. Frasson, *Ateneo Veneto* պարբերաբեր-
թին մէջ (*A. V.*, Rivista di scienze, lettere ed arti; 145, vl. 138, N.
1-2, Venezia, 1954, Gen. - Dic. pg. 32-35). ներկայ ցուցակը բազմ
ենք անկէ, նիւթերու այլ դասաւորումով եւ փոքրիկ յաւելումներով:

1. — *Osservazioni sulla traduzione armena del «Περὶ φύσεως ἀνθρώπου» di Ne-
mesio.* («Giornale della Società asiatica italiana»; Firenze);
Ա. Մաս — 19, 20, 1907, էջ 213 — 247
Բ. Մաս — 21, 1908, էջ 327 — 334
Գ. Մաս — 22, 1910, էջ 155 — 178
2. — «Տիրակալ» բառի արտասովոր առումը հայերէնի մէջ: («Բազմավէպ», 1907, թ.
5, էջ 209 — 211): Թրգմ. Հ. Տիմոթէոս Տէր Կիւլեան:
3. — «Η χουρία» եւ «Տիրակալ» բառերը: Յսկելուածական ծանոթութիւն նախորդ յօդուածին:
(«Բազմավէպ», 1907, թ. 6, էջ 268):
4. — *Singolare accezione del vocabolo armeno «Tirakan»:* («Giornale della Società
asiatica italiana»; 20, Firenze, 1908, pagg. 89 — 92):
5. — *Fabellae Olympianae* ex armeniaca versione nunc primum, deperdito jam olim
graeco archetypo, totidem fere verbis expressae, criticis quas dicunt, notis
instructae. («Giornale della società asiatica italiana»; 20, Firenze, 1908, pagg.
81 — 99):
6. — *Giovanni Mandacuniese* — Un brano del discorso intorno all'amore tradotto
in dialetto veneziano. (Յիշատակուած Pagliaini-է. «Catalogo generale della libreria
italiana 1900 — 1910»; Milano, 1914, Giovanni բառին տակ):
7. — *Qualche osservazione sulla formazione del plurale nell' antico armeno.*
(«Յուշարձան. գրական ժողովածոյ, առթիւ 100ամեայ յոբելինի հաստատման Միւիթ.
Միաբանութեան ի վիճակ, եւ 25ամեայ տարեշրջանի Հանդէս Ամսօրեայ ուսումնա-
թերթի», վիճակ, 1911, էջ 275 — 278):
8. — *Studio sul raddoppiamento, allitterazione e ripetizione nell'armeno antico.*
(«Giornale della Società asiatica italiana»; Firenze, 24, 1912, pagg. 1 — 98; 25,
1913, pagg. 305 — 313):
9. — *Note di etnografia e linguistica armena.* («La nuova cultura», 1, 8, Torino,
1913, pagg. 582 — 588):
10. — *Frammento di un florilegio di autori greci in un Codice armeno-borgiano
della Vaticana.* («Rendiconti della R. Accademia dei Lincei»; ser. 5, 22, 11 —
12, Roma, 1914, pagg. 633 — 664):
11. — *Due parole su Eliseo, storico armeno del 5° secolo d. C.* («Rivista abruzzese,
di s. l. a.», 32, 6, Teramo, 1917 pagg. 333 — 337):
12. — *Sentenze e aneddoti attribuiti a Menandro dalla tradizione gnomologica
armena.* («Rivista degli studi orientali a cura della Scuola orientale nella R.
Università di Roma»; 7, Roma, 1918, pagg. 837-860):
13. — Կոչումն «Փրաւաշի» հայ քրիստոնէայ վաշերարդորի մը մէջ. («Բազմավէպ»,
1922, թ. 11, էջ 322-326): Թրգմ. Հ. Եղուարդ Սիրունեան:

14. — *Nota sul Codice armeno della Capitolare di Perugia.* («Catalogo del Museo
dell'Opera del Duomo di Perugia»; Perugia, 1923, pag. 7-8) Անտոնովի:
15. — *La pena escatologica del gelo in documenti della letteratura armena.* («Le
monde oriental»; 17, Uppsala, 1924, pagg. 242-254):
16. — *La leggenda di Zosimo secondo la redazione armena.* («Giornale della socie-
tà asiatica italiana»; N. S. 1, 2, Firenze, 1926, pagg. 146-162):
17. — *Una più ampia redazione armena della leggenda di Zosimo.* («Byzantinische
Zeitschrift»; 26, 1, Lipsia, 1926 pagg. 33-54):
18. — *Elementi della tradizione argonautica in una leggenda popolare di Ara.*
(«Annuario del R. Liceo-Ginnasio M. Foscarini 1925-26»; Venezia, 1927, pag.
25-27):
19. — *Notizie su alcune varianti del testo armeno di Afraate.* («Հանդէս Ամսօրեայ»,
1927, թ. 11-12, էջ 681-684):
20. — *Lezioni marginali ai quattro Libri dei Re in un Codice armeno dell' anno
1328.* («Atti del R. Istituto Veneto di s. l. a.», 87, 2, Venezia, 1928, pagg.
1217-1215):
21. — *Noterelle ad un passo di Mechitar Gosh riguardante la proibizione di alcu-
ne formule di giuramento.* («Annuario del R. Liceo-Ginnasio M. Foscarini
1927-28»; Venezia, 1929, pagg. 44-46):
22. — *Appunti critici e linguistici a due antiche versioni armene di un frammen-
to euripideo.* («Atti del R. Istituto Veneto di s. l. a.», 88, 1, Venezia, 1929,
pagg. 471-475):
23. — *Per gli studi sul testo e sulla lingua della redazione armena dei «Geopo-
nicon Libri»* («Atti del R. Istituto Veneto di s. l. a.», 89, 2, Venezia, 1930,
pagg. 609-627):
24. — *Codici armeni ignorati delle Biblioteche di Perugia e di Rimini.* («Atti del
R. Ist. Veneto di s. l. a.», 89, 2, Venezia, 1930, pagg. 1041-1059):
25. — *Un très ancien commentaire grec sur le Lévitique, conservé en arménien.*
(1.ª partie). («Բազմավէպ», 1932, թ. 6-7, էջ 282-294: Հանդէս հայերէն ամիս-
փունով, կատարուած Հ. Եղիա Վրդ. Փէլիկեանի կողմէ:
2.ª Partie — «Բազմավէպ», 1932, թ. 8-9, էջ 390-395
3.ª Partie — " " " 10-11, " 436-444
4.ª Partie — " " " 1933 " 3, " 106-111:
26. — *Una interpretazione caratteristica di Eusebio Emesseno e la questione del
pseudo-Cirillo.* («Բազմավէպ», 1934, թ. 5-6, էջ 184-192):
27. — *Nuove identificazioni nel Commentario di Procopio per mezzo del pseudo-
Cirillo.* («Բազմավէպ», 1935, թ. 9-12, էջ 413-418):
28. — *Notizie sulla catena di Giorgio di Skevra e su due codici armeni della
Casanatense.* («Giornale della società asiatica italiana»; N. S. 3, 3-4, Firenze,
1935, pagg. 307-318):
29. — *Di una vetusta catena sul Levitico perduta in greco e conservata in armeno,
della sua stretta relazione col commentario di Procopio di Gaza e dei tre codici
di S. Lazzaro che la contengono.* (Stampato a Venezia, Tipografia Armena di S.
Lazzaro, 1938, in 8°, pagg. XVI — 136, con 3 tavv. f. t. e 4 fac. sim (Lavoro
premiato dalla R. Accademia dei Lincei). Այս հրատարակութեան մասին գրախօսա-

կան մը, հանդերձ հեղինակին կենսագրութեամբ, կատարուած Հ. Եղիա Վ. Փէշի-
կեանի կողմէ, աւել Բազմավեպի մէջ, 1939, թ. 6-7, էջ 173-175:

30. — *Sugli elementi teologici di Proclo Diadoco nelle versioni e nei commentari di Simeone Ieromonaco e di Simeone vescovo di Garni.*
1^a parte — «Բազմավեպ», 1947, թ. 7-8, էջ 158-168.
2^a parte — " 1950, թ. 5-6, էջ 122-129.

ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ENCICLOPEDIA ITALIANA TRECCANI-ի մէջ
(ROMA, 1932 - 1937)

- Ecmiadzin — (Էջմիածին) — 13, pagg. 421-422
Eliseo — (Եղիշ) — 13, pag. 826
Fausto di Bisanzio — (Փաւստոս Բիզանդ) — 14, pag. 907
Gregorio Illuminatore (Գրիգոր Լուսաւորիչ) — 17, pag. 926
Lazzaro di Pharp — (Ղազար Փարպեցի) — 20, pag. 704
Mechitar — (Միքիթար) — 22, pag. 671
Mechitar Gos — (Միքիթար Գոս) — 22, pag. 671
Mesrop — (Մեսրոպ) — 22 pagg. 941-942
Sempad — (Սմբատ) — 31, pag. 357
Sis — (Սիս) — 31, pagg. 911
Sisakan — (Սիսական) — 31, pag. 912
Tigrane — (Տիգրան) — 33, pag. 839
Tiridate — (Տրդատ) — 33, " 913

ԳՐԱՆՈՍԱԿԱՆՆԵՐ ԻՏԱԼԵՐԷՆ ԼԵԶՈՒՈՎ

1. — Հայկական նոր մատենագիտութիւնը և հանրագիտարան հայ կեանքի, Հ. Արսէն Ղա-
զիկեանի. Հար. Ա. Վեկեաթի, Ս. Ղազար 1909. («Giornale della società asiatica
italiana»; 22, Firenze, 1910, pagg. 323-324).
2. — *Classification des dialectes arméniens par Adjarian, Paris, 1909.* («Giornale
della società asiatica italiana»; 22, Firenze, 1910, 330-331).
3. — Բազմաբնական դիտողութիւններ: Գասական շրջան: Հ. Արիստ. Վարդանեանի. Վիեն-
նա, 1913; («Rivista degli studi orientali a cura della Scuola orientale nella R.
Università di Roma»; 6, 3, Roma, 1913, pagg. 1055-1058).
4. — *Le parler arménien d'Akn (quartier bas) par M. Maxudianz; Paris, 1912.*
(«Giornale della Società asiatica italiana»; 26, 1, Firenze, 1914 pagg. 155-157).
5. — Ճաշեր և խմիչքի հին Հայաստանի մէջ, Հ. Վարդան Հաջունի. Վեկեաթի, 1912:
(«Giornale della società asiatica italiana»; 26, 2, Firenze 1915, pagg. 310-311).
6. — Մայր ցոյցակ հայերէն ձեռագրաց մատենագրութիւնի Միքիթարեանց, Հ. Բարսեղ
Սարգիսեանի, հո. Ա. Վեկեաթի, 1914: («Giornale della Società asiatica italiana»;
27, Firenze, 1916, pagg. 189-192).
7. — Պատմութիւն հին հայ տարազի, Հ. Վարդան Հաջունի. Վեկեաթի, 1924: («Gior-
nale della Società asiatica italiana»; N. S. 1, 2, Firenze, 1926, pagg. 182-187).
8. — *Neuarmerische Grammatik, Ost-und Westarmenisch, von A. Abeghian; Ber-
lin, 1936.* («Բազմավեպ», 1937, թ. 2-5, էջ 111-112):

ՋԵՆՔԻ ՏԱԿ

ՓԱՉԱՐԻՍԸ

Առաւել ժամը եօթին, Փրիշփուլէի Տոմ կոչուած արդիական զեղեցիկ շէնքին մէջ, որու կողքին կը բարձրանան Մուրատ և Իպրահիմ էֆէնդիներուն ընտանեկան բնակավայրերը՝ ևս հետամուտ եմ իմ գումարտակիս հիւանդները աչքէ անցընե-
լու: Երբ, ամէն ինչ վերջացուցած, կը պատրաստուիմ ինձ օգնական Վիտայէ Պո-
րիսաւելիչի հետ դուրս ելլելու, առջեւս կը գտնեմ քառասունի վրայ մարդ մը, մի-
ջահասակ, թխադէմ և կրակուրոց աչքե-
րով: Անոր արտաքինը կը մտնէ ամենա-
յեան չքաւորութիւն: Մօրուքը երկնցեր է, մարմը խառնակ, խօսակցութիւնը չափազանց յարգալի: Մօտենալով, կը բարեւէ զիս, և հաստատ և անթերի թուրքերէնով մը կը փափաքի իմանալ թէ ե՞ս եմ արդեօք թուրք ծագում ունեցող խտրացի սպան:

— Ոչ:

— Ներողութիւն, ինձի այսպէս ըսին:

— Ի՞նչ կ'ուզէիք:

— Կինս հիւանդ է. կրնա՞ք դալ յե-
լել:

— Սիրով:

Ճամբուս ընթացքին, Փաշարիսը ինձ կը պատմէ որ Սկիւպէն է, թէ ստիպուել է փախչիլ Պուլկարիայէն, թէ ոխերիմ թշնամի է սերպ ազգայնականներուն, ո-
րոնք կը կոռին Տրակի Միլասյուլիչի հրամանատարութեան տակ, թէ...

— Սկիւպի մէջ Հայեր կա՞ն:

Հարցումս դայն կը շփոթեցնէ: Սա-
կայն, վայրկեանապէս ինքզինքը գտնելով կը պատասխանէ.

— Այո, աշխատասէր մարդիկ են. ոչ
ոքի մնաս չեն հասցներ:

Փաշարիս հասկցեր էր որ Հայ եմ:

Փաշարիսի տունը տուն կոչուելու իրա-
ւունք չունի: Վաքուֆ թաղամասին մէջ կը

գտնուի, փայտաշէն կամուրջէն անդին:

Անոր կինը երկնցեր է թափթփած ան-
կողմի մը վրայ. աչքերը կ'այրին ջերմի
մէջ: Սենեակին մէջ ամէն բան անխնա-
մութիւն կը մատնանէ: Բայց, հիւանդը
զեղեցիկ է: Կոկորդին զեղծերը բորբոքած
են, զեղնորակ կէտկեռումով հրահրեալ:
Մերթ ընդ մերթ կը սրտնեղի, կոկորդին ու
կուրծքը բռնելով:

Յուզուած այս մանկամարդ կնոջ զե-
ղեցիկութենէն և անձայր թշուառութենէն
կը հարցնեմ.

— Տիկին, մասնաւոր բանի մը պէտք
ունի՞ք:

— Քիչ մը շաքար, պարոն բժիշկ, փոք-
րիկիս համար:

— Շատ լաւ. մի' յուզուիք, տիկին,
կ'ունենաք պէտք եղածը:

Ճամբուս ընթացքին, Պորիսաւելիչը
լուս է: Գիտեմ որ մարմնով և հոգիով
սերպ է, թէ իր հոգիին բոլոր զայրոյթով
կ'ատէ Գերմանները, կ'ատէ Մոնթենեկրո-
յի Իսլամ փոքրամասնութիւնը, որ, ըստ
իրեն, միշտ օրուան դօրաւորին հետ է,
քծնող և անողնաշար Իսլամ փոքրամա-
սնութիւնը:

Ամիս մը վերջ, Ենթասպայ ձիորճիոյի
հետ, որուն ստիպուցներ եմ, մեր ուղղա-
ւունք փոխեցին «Հիմի է՞լ լըռենք, եղբարք,
հիմի է՞լ»-ը, կ'անցնիմ Փրիշփուլէի զե-
ղեցիկ շէնքերէն մէկուն առջեւէն:

— Վինչենցոյ, զիտե՞ս որ այս շէնքը
պիտի յանձնուի Փաշարիսին:

— Ի՞նչ:

— Այո՛, Ալպեան Հրամանատարու-
թեան կարգադրութեամբ: Փաշարիսը հա-
մախքած է հինգ հարիւր Ուսթաշաներ,
զորս զինած ենք մենք, և որոնք ասկէ
վերջ մեր կողքին պիտի մարտնչին ապրա-
տամբներուն դէմ:

— Ի՞նչպէս կ'ըլլայ որ դուն տեղեակ
ըլլաս այսպիսի բաներու:

— Մեր խումբին Հրամանատարը ը-